ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«24» հունվարի 2019 թվականի № 20-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԷՋՄԻԱԾՆԻ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ» ԲԲ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «Էջմիածնի շինանյութեր» ԲԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին թիվ 169-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի հունիսի 29-ի թիվ 01ԱԳ/29.4/3770-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.06.2018թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 1 023,3 (մեկ միլիոն քսաներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 82,5 հազար (ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների մասով՝ 175.0 հազար (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, մշտադիտարկումների մասով՝ 37.0 հազար (երեսունյոթ հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-546 պայմանագրի 5.1.2 կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

2018 թվականի հունիսի 29-ի թիվ 01ԱԳ/29.4/3770-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵՊԲՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: 2018 թվականի դեկտեմբերի 4-ին թիվ 169-Ա հրամանով

Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Սույն վարչական վարույթն երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Հանձնաժողովը, փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկելով՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները գտավ, որ սույն վարչական վարույթն ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից վերացվել են վարչական վարույթի հարուցման հիմք հանդիսացած ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված խախտումները, Ընկերությունը կատարել է ապառքների գծով բոլոր վճարումները, ինչը հաստատվում է Ընկերության կողմից վարչական վարույթում ներկայացված համապատասխան վճարման անդորրագրերով: Ընկերության կողմից ներկայացվել է նաև 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Էջմիածնի շինանյութեր» ԲԲ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 4-ին թիվ 169-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

1/24/2019

X

VERIFIED OCSP 24-Jan-19 12:02:19 GMT

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770